Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1250[4]-26.01.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՄԲՅՈՒՂԻ ԵՎ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» 2004 թվականի մարտի 16-ի ՀՕ-53-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՄԲՅՈՒՂԻ ԵՎ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» 2004 թվականի մարտի 16-ի ՀՕ-53-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում~~, ինչպես նաև այդ մասին իրականացնում է հրապարակային ծանուցում~~» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
««ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ և ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1250-26.01.2026-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1250[1]-26.01.2026-ՊԻ-011/1 - Կ-1250[17]-26.01.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով: Առաջարկը բխում է նախագծի վերնագիրը դրա բովանդակությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունից («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			12-րդ հոդվածի 1-ին մաս)՝ այն հաշվառմամբ, որ ըստ նախագծի դրույթների՝ կատարվում է միայն մեկ լրացում:		
2.	Կառավարություն	««Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	««Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ինտերնետային կայքում» բառերից հետո կիրառվող՝ «, ինչպես նաև այդ մասին իրականացնում է հրապարակային ծանուցում» բառերը հանել: Առաջարկը բխում է դրույթի շրջանակում ավելորդ կրկնությունը բացառելու անհրաժեշտությունից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ինտերնետային կայքում» բառերից հետո կիրառվող՝ «և իրականացնում է հրապարակային ծանուցում» բառերը հանել: Առաջարկը բխում է դրույթի շրջանակում ավելորդ կրկնությունը բացառելու անհրաժեշտությունից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4.	Կառավարություն	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը: Առաջարկը բխում է նախագծի վերնագիրը դրա բովանդակությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունից («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս)՝ այն հաշվառմամբ, որ ըստ նախագծի դրույթների, նաև սույն ամփոփաթերթի 6-րդ կետի հաշվառմամբ, կատարվում են միայն փոփոխություններ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «կետից» բառը փոխարինել «կետում» բառով, «հանել» բառը հանել: Առաջարկը բխում է մտքի հստակությունն ապահովելու անհրաժեշտությունից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6.	Կառավարություն	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում « «ծանուցումը» բառից առաջ լրացնել «իրականացնում է հրապարակային ծանուցում, ինչպես նաև» բառերը,» բառերը հանել: Առաջարկը բխում է մտքի հստակությունն ապահովելու և ավելորդ կրկնությունները բացառելու անհրաժեշտությունից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը: Առաջարկը բխում է օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերի բնույթը հստակեցնելու անհրաժեշտությունից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	««Ավտոտրանսպորտային միջոցների	««Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող	Ընդունվել է, կատարվել է	Ընդունվել է:

		օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում « .» բառերը» կետադրական նշանները և բառը հանել: Առաջարկը բխում է վրիպակը շտկելու անհրաժեշտությունից:	համապատասխան փոփոխություն:	
9.	Կառավարություն	«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «8-րդ մասի» բառերից հետո լրացնել «առաջին նախադասությունում» բառերը, «բառերով» բառից հետո լրացնել հետևյալ բառերը. «, իսկ երկրորդ նախադասությունում «առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում» բառերը՝ «կառավարչի ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով»:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Առաջարկը միտված է հստակեցնելու, որ նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունը վերաբերում է «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 81-րդ հոդվածի 8-րդ մասի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ նախադասություններին:		
10.	Կառավարություն	««Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մաս	««Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «8-րդ մասում» բառերից հետո լրացնել «առաջին և երկրորդ նախադասություններում» բառերը: Առաջարկը միտված է հստակեցնելու, որ նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունը վերաբերում է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ նախադասություններին:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծերի փաթեթից հանել ««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Առաջարկը բխում է այն հանգամանքից, որ 11.02.2026 թվականին ընդունված և 17.02.2026 թվականին ուժի մեջ մտած՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-28-Ն օրենքի 4-րդ հոդվածի 10-րդ մասով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասն արդեն իսկ վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշումը ենթակա է պարտադիր հրապարակման նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:», որպիսի պայմաններում սույն նախագծի անհրաժեշտությունը բացակայում է:		
12.	Կառավարություն	«Ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծերի փաթեթից հանել «Ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը: Առաջարկը բխում է այն հանգամանքից, որ 13.11.2025	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			թվականին ընդունված և 14.12.2025 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-380-Ն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով Ջրային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի յոթերորդ պարբերության «հասարակայնության ծանուցում» հասկացությունից հանվել են «, որը տպագրվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող տպագիր միջոցներում» բառերը, որպիսի պայմաններում սույն նախագծի անհրաժեշտությունը բացակայում է:		